

# Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրական բացերը, առկա խնդիրները և դրանց կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում

*Խաչատրյան Ն. Ա.*

*Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ  
nare.v.khachatryan@gmail.com*

*Սահակյան Դ. Մ.*

*Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի մագիստրանտ*

**Հիմնաբառեր՝** տնտեսական մրցակցություն, մենաշնորհ, գերիշխող դիրք, գերիշխող դիրքի չարաշահում, ֆիզիկական անձ, տնտեսվարող սուբյեկտ, տնտեսական շուկա:

## **Законодательные пробелы в защите экономической конкуренции, существующие проблемы и пути их регулирования в Республике Армения**

*Хачатрян Н. А.*

*Аспирант Российско-Армянского (Славянского) университета  
nare.v.khachatryan@gmail.com*

*Саакян Д. И.*

*Магистрант Российско-Армянского (Славянского) университета*

**Аннотация.** Данная научная статья посвящена приобретшей большую роль и важность в современном гражданском праве антимонопольной политике и защите экономической конкуренции. Сегодня нормы этих правоотношений постоянно развиваются и совершенствуются. В рамках представленной темы изучаются и разъясняются как понятие и важность конкурентного права в деле развития экономики государства, так и его проблемы и пути правового регулирования. Важность и значение выбора данной темы обусловлены представлением средств защиты и поощрения свободной экономической конкуренции путем обеспечения необходимой среды для добросовестной конкуренции, а также возможностью использования всего потенциала правового инструментария для содействия развитию предпринимательства в Республике Армения и защите интересов потребителей.

**Ключевые слова:** экономическая конкуренция, монополия, доминирующее положение, злоупотребление доминирующим положением, физическое лицо, хозяйствующий субъект, экономический рынок.

## **Legislative gaps of the protection of economic competition, existing problems thereof and ways to resolve them in the Republic of Armenia**

*Khachatryan N.A.*

*PHD student of Armenian-Russian (Slavonic) University  
nare.v.khachatryan@gmail.com*

*Sahakyan D. I.*

*Master's student of Armenian-Russian (Slavonic) University*

**Abstract.** This scientific article is devoted to the antitrust policy that has played a major and significant role in modern civil law and the protection of economic competition. Today, the norms of these legal relations are constantly evolving and improving. Within the framework of the presented topic, the concept of competition law and its importance in the development of the state economy, as well as its problems and the ways of legal regulation are studied and clarified. The importance and significance of the choice of this topic is conditioned by introducing the means of protection of free economic competition, the ways of providing the necessary environment for fair competition, as well as the possibility of using the full potential of legal tools to promote the development of business and protect the interests of consumers in the Republic of Armenia.

**Keywords:** economic competition, monopoly, dominant position, abuse of dominant position, natural person, business entity/legal personality, economic market.

*Մրցակցությունը տնտեսության վերականգնման և զարգացման բանալին է:  
Ֆր. Ռուզվելտ, Լիխտենբերգ, 1963*

Տնտեսական մրցակցությունը երկրի տնտեսական բարեկեցության հիմնաքարն է և առողջ տնտեսական համակարգի ձևավորման ամենա-

կարևոր գրավականներից: Տնտեսագետները երկու կարևոր ավանդ են ունեցել հակամենաշնորհային իրավակարգի զարգացման

համար: Առաջին, երկրի տնտեսությունը կառավարելու համար մրցակցությունը դարձնել վերահաս ու առաջնային մեխանիզմ: Տնտեսագետների երկրորդ ամենանշանակալի ներդրումն այն է, որ նրանք ուղղորդեցին հակամենաշնորհային քաղաքականության ձևավորմանը: Մասնավոր և պետական կազմակերպությունները հաճախ հիմնվում են մրցակցային գների առաջարկի վրա, որպեսզի հասնեն այդ նպատակին: Մրցակցային գործընթացն, ինչևէ, կիրառելի է միայն այն ժամանակ, երբ մրցակիցները սահմանում են գներն ազնիվ և անկախ: Իսկ, երբ մրցակիցները հակամրցակցային համաձայնությունների միջոցով (գաղտնի և անօրինական կերպով) համագործակցում են, գներն արհեստականորեն աճում են, իսկ սպառողը՝ խաբվում: Գների անհիմն բարձրացումը, իջեցումը, պահպանումը, հայտերի կեղծումը, շուկայի բաշխումը և համագործակցության այլ ձևեր անօրինական են և համաձայն ՀՀ օրենսդրության ենթակա են վարչական պատասխանատվության: Իսկ օտարերկրյա շատ պետություններում, օրինակ ԱՄՆ, ԵՄ, ՄԹ և այլն, նման անօրինական գործարարար ակտիվության համար նախատեսվում է ոչ միայն վարչական, այլև՝ քրեական պատասխանատվություն:

Տնտեսական գրականության մեջ գոյություն ունեն մրցակցություն և մենաշնորհ տերմինների տարբեր մեկնաբանություններ:

Մրցակցություն տերմինը տարբեր լեզուներից թարգմանվում էր որպես երկու կամ ավել անձանց միջև պայքար, ինչը բնորոշ էր մարդու հոգեբանությանը և կարող էր արտահատվել տնտեսական հարաբերություններում [10]:

Ա. Սմիթը իր «Ժողովուրդների հարստության բնույթի ու պատճառների ուսումնասիրություն» աշխատությունում պարզաբանել է մրցակցության հասկացությունը հետևյալ կերպ. «Մրցակցությունը կարող է հենց այս պահին էլ սկսվել սպառողների միջև, եթե տեղի ունենա պահանջարկի կրճատում, որը կրեթի գների բարձրացման, սակայն երբ առաջարկը շատ մեծ է, գները կարող են իջնել ավելի ցածր, քան նախատեսում էր վաճառողների մրցակցությունը» [11]:

Ա. Սմիթը առանձնացնում է ազատ մրցակցության առկայության մի քանի պայման.

1. մրցակիցները պետք է գործեն միմյանցից անկախ, ոչ թե պայմանավորվածություններով,
2. տնտեսվարող սուբյեկտները պետք է բավարար գիտելիքներ ունենան շուկայի հնարավորությունների մասին,
3. անհրաժեշտ է ապահովել այդ գիտելիքներին համապատասխան գործողությունների ազատություն,

4. մրցակիցների քանակը պետք է բավարար լինի, որպեսզի բացառվի գերշահույթը,
5. անհրաժեշտ է բավարար ժամանակ, որպեսզի ռեսուրսների ուղղությունը և ծավալը համապատասխանեն տնտեսվարող սուբյեկտների ցանկություններին [10]:

Տնտեսվարող սուբյեկտների համար կենսական նշանակություն ունի հավասար մրցակցային պայմանների ապահովումը, համապատասխան օրենսդրության ստեղծումը, քանզի վերջինս է հանդիսանում ազատ մրցակցային շուկայի ապահովման գրավականը:

ՀՀ-ում տնտեսական մրցակցության պաշտպանությունը ամրագրված է և կարգավորվում է ստորև նշված օրենսդրական ակտերով.

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք
4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
5. «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներ»
6. «Եվրասիական տնտեսական միության» մասին պայմանագիր

ՀՀ-ում տնտեսական մրցակցության պաշտպանությունը ունի ոչ այնքան երկար պատմություն: Այս ուղղությամբ առաջին քայլը կարելի է համարել 2000 թ. նոյեմբերի 1-ին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Հոդվածում մենք ավելի մանրամասն կուսումնասիրենք «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) և կփորձենք վեր հանել ոլորտում առկա խնդիրները և գտնել լուծման ուղիներ դրանց համար:

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ օրենքի կիրառությունումը չի տարածվում ֆիզիկական անձանց վրա, թեև միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական մրցակցության մասին օրենքները տարածվում են նաև ֆիզիկական անձանց վրա:

Համաձայն «Մրցակցության պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի՝ օրենքը տարածվում է այն հարաբերությունների վրա, որոնք կապված են մրցակցության պաշտպանության, այդ թվում՝ մենաշնորհ գործունեության և անբարեխիղճ մրցակցության նախագրուշացման ու կանխման հետ, որոնց մասնակցում են Ռուսաստանի Դաշնության և օտարերկրյա իրավաբանական անձինք, կազմակերպությունները, գործադիր իշխանության դաշնային մարմինները, Ռուսաստանի Դաշնության պետական կառավարման մարմինների սուբյեկտները, տեղական ինքնակառավարման մարմինները, նշված մարմինների

գործառույթներն իրականացնող մարմինները կամ կազմակերպությունները, ինչպես նաև պետական արտաբյուջետային ֆոնդերը, Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկը, ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը [12]:

Յուրօրինակ մոտեցում ունի բելառուսական օրենսդրությունը: Ըստ Բելառուսի հանրապետության հակամենաշնորհային օրենքի՝ ֆիզիկական անձինք չեն համարվում տնտեսվարող սուբյեկտ, թեպետ վերջիններս պատասխանատվություն են կրում հակամենաշնորհային օրենսդրության խախտումների համար [6]:

Համաձայն Օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտ են հանդիսանում արտոնագրային վճար վճարողները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, այլ կազմակերպություններ, դրա ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը, անձանց խմբերը, առևտրային ցանցերը: Սույն օրենքով նախատեսված համակենտրոնացման դեպքում տնտեսվարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը» [5]:

Թեև ֆիզիկական անձը կոնկրետ դեպքում նշված է որպես տնտեսվարող սուբյեկտ, գտնում ենք, որ օրենքում պետք է կատարվի փոփոխություն: Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկում ենք Օրենքի 2-րդ հոդվածում և 4-րդ հոդվածի 1-ին մասի տնտեսվարող սուբյեկտներ սահմանման մեջ ավելացնել «ֆիզիկական անձ» տերմինը:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում տնտեսական մրցակցությունը սպառնում է Սահմանադրությամբ: Համաձայն 2015 թ-ի ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի՝ ՀՀ-ում երաշխավորվում է ազատ տնտեսական մրցակցությունը՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային հարաբերությունների և անբարեխիղճ մրցակցության արգելման միջոցով:

Նկատի ունենալով վերոգրյալը և հիմք ընդունելով շուկայում առկա խնդիրները՝ ստորև կներկայացվի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման ոլորտի մանրակրկիտ ուսումնասիրությունը, որն ի հայտ է բերում մի շարք իրավական կարգավորում պահանջող հիմնահարցեր:

Շուկայում գերիշխող դիրք գրադեցնող տնտեսվարող սուբյեկտին կարելի է նույնացնել շուկայական իշխանություն ունեցող ձեռնարկության հետ: Շուկայական իշխանությունը ապրանքային շուկայի սուբյեկտներին իր կամքը թելադրելու, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակելու տնտեսվարող սուբյեկտի հնարավորությունն է [13]: Ապրանքային շուկայի սահմանումը տրված է Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում, համաձայն որի՝ ապ-

րանքային շուկան՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով: [5]:

Գերիշխող դիրքի չարաշահումը մրցակցության պաշտպանության բարդագույն ոլորտներից է: Վերջինիս բարդությունը կայանում է նրանում, որ գույություն ունեն չարաշահման բազում տեսակներ:

ՀՀ Օրենքի իմաստով տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից [13]:

Ըստ Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի «Հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության սպառնալուծում կամ բարձրացմանը, տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, արտադրության խթանմանը, ապրանքների կատարելագործմանը, ապրանքների արտահանման խթանմանը, նպաստում են սպառողների շահերին»: Տվյալ դրույքի վերլուծությունից պարզ է դառնում, որ հակամրցակցային համաձայնությունների կայացման համար օրինական հնարավորություն է ընձեռնվում, քանի որ գրեթե անհնար է դառնում շուկայում համաձայնության մասնակիցների ունեցած մասնաբաժինների պարզումը:

Ըստ Օրենքի (մինչև 2011 թ. Փոփոխությունները)՝ գերիշխող դիրքի պարզման, ինչպես նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի (ռեեստրի) վարման կարգը սահմանում էր Հանձնաժողովը: Օրենքում 2011 թ. ապրիլի 12-ին կատարված լրացումները և փոփոխությունները ունեցան կարևոր նշանակություն ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի նկատմամբ վերահսկողության նկատմամբ, քանի որ Օրենքով սահմանված Հանձնաժողովի գործառույթներից հանվեց գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված ռեեստրի վարման պահանջը:

Այս փոփոխությունների արդյունքում ոլորտը դարձավ ավելի դժվար վերահսկելի, քանզի մինչ այդ Հանձնաժողովն էր կայացնում

տնտեսավարող սուբյեկտին գերիշխող դիրքում գրանցելու և գերիշխող դիրքը կորցնելու մասին որոշումները: Քանի որ, համաձայն Օրենքի 17-րդ հոդվածի Հանձնաժողովը ստեղծվում է պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով, այն կարելի է համարել քաղաքական մարմին: Գտնում ենք, որ նմանատիպ վերահսկողություն իրականացնելու համար պետք է ստեղծվի անկողմնակալ, չեզոք և անկաշկանդ մարմին, ով օժտված կլինի խուզարկություններ իրականացնելու լիազորությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը իր վերլուծությունները ձևավորում էր հիմնվելով տնտեսավարող սուբյեկտներից ստացած տեղեկատվության հիման վրա: Քանի որ խուզարկությունն ինքնին առանձին իրավական կարգավորում պահանջող գործառույթ է, մինչ առանձին մարմնի համար կանոնադրության մշակումը, առաջարկում ենք այդ լիազորությունը փոխանցել ՀՀ Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությանը կամ այն իրականացնել Հանձնաժողովի հետ համագործակցելով:

Օրենքում կարող ենք հանդիպել ևս մեկ հակասության: Ըստ օրենքի չի արգելվում գերիշխող դիրք ունենալը, արգելվում է վերջինիս չարաշահումը:

Ըստ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի. «Հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն է ապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումը թույլատրվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա, որը կարող է պարունակել նաև համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ» [5]:

Վերոգրյալի վերլուծությունից պարզ է դառնում, որ համակենտրոնացումները թույլատրվում են ավելի վաղ գերիշխող դիրք ձեռք բերած տնտեսավարող սուբյեկտներին: Տվյալ ոլորտը նույնպես ունի փոփոխությունների և վերանայումների կարիք:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ թեև Հայաստանի Հանրապետությունում այս ուղղությամբ օրենսդրության զարգացմանն ուղղված գործողությունները շատ են, սակայն անհերքելի է այն փաստը, որ կան շատ բացեր: Հողվածում ներկայացված են մի շարք խնդիրներից մի քանիսը, որոնց ուսումնասիրությունը հանգեցնում է նրան, որ շատ կարևոր է ֆիզիկական անձանց, ովքեր իրենց գործողություններով խոչընդոտում են տնտեսական մրցակցության ապահովմանը կամ իրենց գործողու-

թյուններով նախադրյալներ են ստեղծում անբարեխիղճ մրցակցության համար, պետք է պատասխանատվության ենթարկվեն տնտեսավարող սուբյեկտներին հավասար: Կարևոր է վերանայել Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շարքը: Գտնում ենք, որ կարևոր է այս ոլորտում ունենալ այնպիսի մարմին, ով կունենա բավարար իրավական գործիքակազմ մենաշնորհների կամ գերիշխող դիրքի ոլորտում վերահսկողություն իրականացնելու համար:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Արշակյան Ա.**, Տնտեսական մրցակցության համակարգը շուկայական էկոնոմիկայում: - Եր., 1997
2. ՀՀ Սահմանադրություն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 05.12.2015 փոփոխություններով, ՀՀ ՊՏ 2015.12.21
3. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 10.09.1998 թ. ՀՀ պաշտոնական տեղեկագիր թիվ 17(5)
4. **Միքայելյան Մ. Վ.**, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը հայաստանի Հանրապետությունում: - Եր., Նահապետ, 2005
5. «Տնտեսական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2001 թվականի նոյեմբերի 6-ին
6. Закон республики беларусь о противодействии монополистической деятельности и развитии конкуренции, от 12 декабря 2013 года no94-з
7. Конституция российской федерации, от 21.07.2014 n 11-фкз
8. Конституция республики казахстана, от 21 декабря 2001 г. N 18/2
9. Кодекс республики казахстан, «предпринимательский кодекс республики казахстан», от 27.12.17 г. No 126-vi
10. **Стиглер Дж.** Совершенная конкуренция: исторический ракурс // Вехи экономической мысли: теория фирмы: В 3 т. / под ред. В. М. Гальперина
11. **Смит А.**, Исследование о природе и причинах богатства народов. – М.: Ось-89, 1997 С. 58
12. Федеральный закон Российской Федерации о защите конкуренции, от 26.07.2006 N 135-ФЗ
13. OECD, “Glossary of Industrial Organization Economics and Competition Law”, Paris, 1998, p. 180

Տճանա/Հանձնվել է՝ 02.04.2021  
Рецензирована/Գրախոսվել է՝ 20.04.2021  
Принята/Ընդունվել է՝ 25.04.2021